ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-33/25

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կարիքների համար Մաքրող և փայլեցնող արտադրանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-33/25 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.10.25 ստացված հարցադրումը և դրան վերաբերյալ 13.10.25 տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում N 1 Հիմք ընդունելով «ՀՀ գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը, արդյոք Ձեր կողմից ընդունելի են բացի Ձեր տեխնիկական բնութագրեւմ առկա ապրանքային անվանումներից, այլ՝տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան համարժեք ապրանքային անվանում ունեցող ապրանք

Պարզաբանում N 1

Ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար՝ լվացող նյութ Դոմեստոս կամ համարժեք են համարվում Միստր ջին կամ Սիլիտ: Նատրիումի հիպոքլորիտի (< 5%) հիման վրա ստեղծված ունիվերսալ գելանման ախտահանիչ միջոց, որը նախատեսված է զուգարանակոնքերի, լոգարանների, սալիկների և խոհանոցային մակերեսների մաքրման և ախտահանման համար:Այն արդյունավետորեն հեռացնում է կեղտը, ճարպը, կրաքարի նստվածքը, բորբոսը և հոտերը, ինչպես նաև սպանում է մանրէների, վիրուսների և սնկերի 99.9%-ը: Այս արտադրանքն ունի ալկալային հիմք՝ բարձր pH-ով, ինչպես նաև պարունակում է անիոնային և ոչ իոնային մակերևութային ակտիվ նյութեր, օճառ և բուրմունք: Հարմար է տարբեր մակերեսների համար, ներառյալ կերամիկա, էմալ, չժանգոտվող պողպատ և պլաստիկ, Արդյունավետորեն հեռացնում է կեղտը և ախտահանում:
Կոնցենտրացված բանաձևը թույլ է տալիս օգտագործել արտադրանքի փոքր քանակություն:
Պետք է լինեն 750-1000 գրամ տարրայով: Ընտրված մասնակիցը պետք է ներկայացնի որակի համապատասխանության վկայականը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-33/25** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Անահիտ Կարապետյանին

Հեռախոս +37410292929-302,

Էլեկտրանային փոստanahit.karapetyan@armats.am, ka9297@yandex.ru: